ԷՐԶՐՈՒՄԻ ՎԻԼԱՅԵԹԻ ՈՐՈՇ ԿԱԶԱՆԵՐԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ ՃՇՏՈՒՄՆ ԸՍՏ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՊԱՍՏԱՆԱԾ ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ 1914-1915թթ. ԿԱԶՄՎԱԾ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՑՈՒՑԱԿՆԵՐԻ

ԳԵՂԱՄ ԲԱԴԱԼՅԱՆ

Ինչպես հայտնի է, 1914թ. հոկտեմբերի կեսերին[1] Կովկասյան ռազմաճակատում մարտական գործողությունների սկսումով, ռուսական զորքերը ժամանակավորապես գրավեցին Արևմտյան Հայաստանի սահմանամերձ առանձին տարածքներ, այդ թվում՝ Էրզրումի վիլայեթի Բասեն կազայի զգալի մասը: Սակայն հոկտեմբերի 25-26-ին ծավալված անհաջող մարտերից հետո ռուսները կարճ ժամանակամիջոցով նահանջեցին, ինչը հարկադրեց տեղի հայ բնակչությանը տեղահանվել:[2] Այսպես սկիզբ առավ արևմտահայերի հերթական գաղթը, որը մի փոքր ավելի ուշ՝ դեկտեմբերին, Մարիդամիշի նշանավոր ճակատամարտի օրերին, ընդգրկեց ավելի մեծ տարածք՝ նույն վիլայեթի Բայազետի ընդարձակ սանջակը գրեթե ամբողջությամբ[3], իսկ 1915թ. հուլիսի վերջին հայաթափեց Վանի վիլայեթը: Տեղահանված հայությունը (նաև՝ հազարավոր ասորիներ, հույներ և ուր.) ապաստան գտավ գերազանցապես Ռուսական կայսրության անդրկովկասյան՝ Երևանի, Թիֆլիսի, Ելիզավետպոլի նահանգների և Կարսի մարզի հայաբնակ գավառներում, Բաքու քաղաքում, իսկ 1915թ. ամռանից՝ նաև ռուսական զորքերի կողմից Պարսկաստանի ռազմակալված առանձին շրջաններում (Մալմաստ, Ուրմիա, Խոյ, Մակու և այլն):

Նշված վայրերում, 1914-1917թթ., ինչպես իշխանությունների, այնպես էլ հայկական մի շարք կազմակերպությունների (մասնավորապես, Կովկասյան բարեգործական ընկերությանը կից հայկական կենտրոնական կոմիտեի), անգամ՝ անհատ անձանց կողմից պարբերաբար անց են կացվել գաղթականների հաշվառումներ և վիճակագրություններ: Տվյալները մասամբ՝ հրատարակվել են (թե՛ առանձին գրքույկներով և թե՛ մամուլում), իսկ մի մասն առ այսօր դեռ մնում է անտիպ: Այդ նյութերը խիստ ուշագրավ են և արժեքավոր: Հատկապես կառանձնացնենք Կովկասի փոխարքայության հրահանգով 1915թ. հունվարի 30-ին Երևանի նահանգում և 1916թ. հունվարի 14-ին ողջ Անդրկովկասում անցկացված միօրյա վիճակագրությունները[4], որտեղ գրանցված ժողովրդա-

գրական տվյալներն արտացոլում են ոչ միայն ներկա պահի, այլև՝ մինչև գաղթը եղած իրավիճակը:

Այս հանգամանքը հատկապես մեծ կարևորություն ունի, քանի որ, ինչպես ցույց է տվել ուսումնասիրությունը, զգալիորեն օգնում է բավական մեծ ճշգրտությամբ որոշել առաջին աշխարհամարտի նախօրյակին Արևմտյան Հայաստանի մի ամբողջ շարք գավառների հայ բնակչության թվաքանակը, խնդիր, որ առ այսօր չի կորցրել իր քաղաքական հնչեղությունը ինչպես մեզ՝ հայերիս, այնպես էլ արդի թուրքական պատմագրության և քաղաքական որոշակի շրջանակների համար: Բավական է հիշել վերջին տասնամյակներում թուրքական քարոզչական մեքենայի կողմից բազմաթիվ հոդվածների և մենագրությունների հրատարակումը (հատկապես կցանկանային առանձնացնել Ք. Քարփաթի և Ջ. Մաք-Քարթիի աշխատությունները)[5], որոնցում, կրկին շրջանառության մեջ դնելով օսմանյան վիճակագրության խեղաթյուրված, քաղաքական միտումնավորությամբ տառապող և հակագիտական վիճակագրությունները, փորձեր են արվում վերակենդանացնել Արևմտյան Հայաստանում հայերի փոքրամասնություն կազմելու «հին երգը», ինչը, ի դեպ, այժմ մեծ «ըմբռնումով» է ընկալվում դաշնակից ԱՄՆ-ի «գիտական» լայն շրջանակների կողմից:

Գաղթականներին վերաբերող վիճակագրական տվյալների օգնությամբ որոշ գավառների հայության թվաքանակի ճշտումը հնարավորություն է ընձեռում մշակելու որոշակի սկզբունքներ, որոնք կիրառելի են ամբողջ Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի համար, ինչը, մեր խորին համոզմամբ, մեկընդմիշտ և վերջնականորեն ցույց է տալիս պաշտոնական վիճակագրության հավաստիության աստիճանն ու մասնագիտական մակարդակը: Բացի այդ, այս տեսանկյունից հարցի քննությունն օգնում է ավելի իրատեսական մոտեցում ձևավորել հենց մեր՝ 1912-1914թթ. հայկական վիճակագրության նկատմամբ, ցույց տալ վերջինիս իսկական տեղը և նշանակությունը քնարկվող խնդրի համար: Ուշագրավ է, որ նման մոտեցում առաջին անգամ կիրառել են հենց ժամանակակիցները: Մասնավորապես, կարելի է առանձնացնել 1914թ. նոյեմբերի վերջին «Հորիզոն» պարբերականում լույս տեսած «Բասէն գաւառի 11 հայ գիւղերի ազգաբնակութիւնը» հոդվածը:[6] Ընդ որում, հայկական կենտրոնական կոմիտեի լիազոր Ադ. Շարաֆյանի կողմից տրամադրված նյութերը համեմատվում են Ա-Դոյի (Հովհաննես Տեր-Մարտիրոսյան)՝ այն ժամանակ Արևմտյան Հայաստանի ժողովրդագրությանը նվիրված առաջին նշանակալից և համապարփակ «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայէթները» (Երևան, 1912) աշխատության տվյալների հետ, տվյալներ, որոնք հեղինակը հավաքել է 1909թ. նշված վարչամիավորների տարածքում կատարած եռամսյա ճանապարհորդության ընթացքում, և որոնք ժամանակային առումով ունեն տարբեր ընդգրկում (սկսած 1890-ական թթ.-ից մինչև 1908-1909թթ.): Հետագայում, սակայն, այս տեսանկյունից հարցը քննելու լուրջ և համակարգված փորձեր, ըստ էության, չեն արվել:

Ինչպես վերը նշեցինք, Կովկասյան ռազմաճակատում մարտական գործողությունների առաջին թատերաբեմերից մեկը դարձավ Բասենը, որն օսմանյան վարչական բաժանումով Էրզրումի սանջակի կազաներից էր և տարածվում էր մինչև այդ ժամանակվա ռուս-թուրքական սահմանը: Առաջին բասենցի գաղթականները Կարսի մարզում հայտնվեցին 1914թ. հոկտեմբերի վերջին (հ. տ.)՝ Քյոփրիքյոյից ռուսական զորքերի ժամանակա-

վոր նահանջից հետո: Դեկտեմբերին, թուրքական բանակի հակահարձակման հետևանքով, գաղթականները ստիպված էին տեղափոխվել Երևանի նահանգի տարածք. ուր և հաշվառվեցին 1915թ. հունվարի 30-ի միօրյա վիճակագրության ընթացքում՝ այդ նպատակով ստեղծված Երևանյան վիճակագրական հանձնաժողովի աշխատակիցների կողմից (ի դեպ, նշված հանձնաժողովի նախագահն էր Ա.-Դոն): Շուրջ երեք տասնյակ գյուղերից[7] դուրս եկած բասենցի հայերի թիվը կազմում էր 12890 անձ (1545 տուն):[8] Ընդ որում, գաղթի ընթացքում նրանք տվել էին զգալի կորուստներ՝ 692 հոգի (դրանք ճանապարհին զոհված, մահացած կամ անհետ կորած, ինչպես նաև հայրենիքում մնացած բնակիչներն էին, որոնց ճակատագիրն անհայտ էր):[9] Փաստորեն, 1914թ. հոկտեմբերի վիճակով, հաշվառված 1545 տներն ունեցել են շուրջ 13.6 հազար բնակչություն: Սակայն, մեզ հասու այլ տվյալներ ցույց են տալիս, որ 1915թ. հունվարի 30-ի միօրյա վիճակագրությունն ամբողջովին չի արտացոլում Արևելյան Հայաստան տեղափոխված բասենցի (և ընդհանրապես՝ արևմտահայ) գաղթականների թիվը: Հայտնի է, որ բասենցիները գրանցվել են մի քանի անգամ, և 1914թ. նոյեմբեր-դեկտեմբերի հաշվառումը պարզում է, որ որոշակի թվով տներ դուրս են մնացել քննարկվող վիճակագրությունից: Այսպես, եթե 1914թ. նշված ամիսներին Յառնան գյուղից Արևելյան Հայաստան էր անցել 190-195 տուն, ապա 1915թ. հունվարի 30-ին գրանցվել էր միայն 174-ը (տարբերությունը՝ մոտ 20 տուն կամ 10.2%): Նույն ձևով, Իշխուի 1914թ. նոյեմբերին գրանցված 132 տնից տեղ են գտել 120-ը (տարբ.՝ 12 տուն կամ 9.1 %), Յուզվերանի 130 տնից՝ 89-ը (տարբ.՝ 41տուն կամ 31.5%) ևն:[10] Մեր հաշվարկներով, միօրյա վիճակագրության ընթացքում հաշվառումից դուրս մնացած բասենցի հայերի թիվը կազմել է ավելի քան 110 տուն (ընտանիք) կամ շուրջ 1000 անձ:[11] Հետևաբար, նշված գյուղերում, ոչ լրիվ տվյալներով, մինչև գաղթն ապրել են շուրջ 14.6 հազար հայեր: Հայտնի է նաև, որ ընդհանուր առմամբ Բասենից Արևելյան Հայաստան էին անցել ավելի քան 15.5 հազար մարդ (առանց կորստի հաշվարկի):[12] Սակայն չմոռանանք, որ տվյալ դեպքում խոսք է գնում Բասենի կազայի միայն արևելյան հատվածից դուրս եկածների մասին (այն էլ՝ ոչ բոլոր): Իրականում, Քյոփրիքյոյ ավանից արևմուտք ընկած շրջանի, այդ թվում՝ Բասենի վարչական կենտրոն Հասան-կալեի հայերը չհասցրեցին հեռանալ (միօրյա վիճակագրությունը գրանցել է այստեղից դուրս եկած միայն 18 տուն՝ 97 անձով, առանց կորստի, որը կազմել է 23 մարդ)[13], ինչը տեղի գաղթականների ընդհանուր թվի 0.8% է միայն: Մինչդեռ մեզ հասած Կարնո (Էրզրումի) հայոց առաջնորդարանի դարասկզբի վիճակագրության համաձայն, որի մասին խոսք կլինի ստորև, Բասենի արևմտյան մասի միայն 9 բնակավայրերում, այդ թվում՝ Հասան-կալեում, ապրել են 3.4 հազարից ավելի հայեր:[14] Ուստի վերոբերյալ 15.5 հազարը դեռ շատ հեռու է գավառի հայ բնակչության իրական թվից: Սակայն նույնիսկ երբ այն համեմատում ենք 1912թ. (հիջրայի 1330) օսմանյան, այսպես կոչված, «համընդհանուր մարդահամարի» (nüfus-i umumî) հետ, ուր Բասենի ողջ հայ բնակչությունը ցույց է տրված 10 հազարից մի փոքր ավելի[15], ապա ակնհայտ է դառնում պաշտոնական վիճակագրության, մեղմ ասած, անկատարությունն ու անլիարժեքությունը (նշենք, որ նշված վիճակագրության տվյալներն ընկած են արդեն հիշատակված Ջ. Մաք-Քարթիի և Ք. Քարփաթի ուսումնասիրությունների հիմքում):

Եվ, այնուամենայնիվ, ինչպե՞ս ճշտել Բասենի գավառի ամբողջ հայ բնակչության թիվը: Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դա հնարավոր է անել հատկապես գաղթականների և Կարնո առաջնորդարանի վերը հիշատակված վիճակագրությունների տվյալների համադրական համեմատությամբ: Առաջնորդարանի տվյալներով, Բասենում հայերի թիվը կազմել է 16740 մարդ (1772 տուն):[16] Բարեբախտաբար, այս վիճակագրությունը պահպանվել է նաև ուշագրավ մանրամասնություններով՝ ֆրանսահայ Հ. Գևորգյանի և Պ. Փաբուջյանի կողմից 1992թ. Փարիզում լույս ընծայած «Հայերն Օսմանյան կայսրությունում ցեղասպանության նախօրյակին» արժեքավոր աշխատության շնորհիվ, որն էլ հնարավորություն է ընձեռում ավելի հիմնավոր կերպով քննության առնել այն: Ամենից առաջ աչքի է զարնում մի ուշագրավ փաստ: Ա-Դ-ոյի աշխատության և առաջնորդարանի ցուցակներում Բասենին վերաբերող տվյալների համադրումն ի հայտ է բերում արտակարգ նմանություն: Երկու դեպքում էլ նույնն են ինչպես հայերի տների թիվը՝ 1772 (այդ թվում՝ նաև ըստ առանձին բնակավայրերի), այնպես էլ հայաբնակ գյուղերի քանակը՝ 57:[17] Միակ տարբերությունն այն է, որ Ա-Դ-ոյի ցուցակը մի փոքր պակասավոր է՝ չի տրված բնակիչների թիվը: Այս ամենը որոշակիորեն ցույց է տալիս, որ Կարնո առաջնորդարանի վերոհիշյալ 16740 թիվը (ի դեպ, առաջին անգամ այն շրջանառության մեջ է դրել հայ հոգևորական Ռ. Բեկգուլյանցն իր ուշագրավ գրքում) արտացոլում է ոչ թե առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակի, այլ ավելի վաղ ժամանակաշրջանի ժողովրդագրական կացությունը: Պայմանականորեն այն կարելի է ընդունել 1909թ., այսինքն այն ժամանակը, երբ Ա-Դ-ոն կատարել է իր եռամյա ճանապարհորդությունը: Ըստ երևույթին, ժամանակի սղության և նոր տվյալների պակասի հետևանքով Կարնո առաջնորդարանը ստիպված դիմել է մի քանի տարվա վաղեմություն ունեցող արդեն պատրաստի ցուցակի օգնությանը, մանավանդ եթե նկատի ունենանք այն հանգամանքը, որ 1912-1913թթ. հայկական բարենորոգումների միջազգային ատյաններում կրկին ընթացող քննարկումները հրատապ էին դարձրել քիչ թե շատ ճշգրիտ վիճակագրությամբ պարզել Արևմտյան Հայաստանի ժողովրդագրական իրավիճակը:

Այս ամենով հանդերձ, Կարնո առաջնորդարանի տվյալները (իհարկե, որոշ վերապահումով), մենք ընդունում ենք ելակետային և կրկին դիմում 1915թ. հունվարի 30-ի գաղթականների միօրյա հաշվառմանը: Մենք առանձնացրել ենք Բասենի այն 15 բնակավայրերը, որոնց բնակչությունը գրեթե ամբողջությամբ էր գաղթել (տես նաև «Հավելված Ա.»):[18] Հունվարի 30-ին Երևանի նահանգում գրանցվել էին դրանց 1476 տների ավելի քան 12.4 հազար բնակիչներ: Ընդ որում, նախքան գաղթն առկա վիճակը պարզելու համար անպայմանորեն հաշվի ենք առել նրանց տված կորուստը՝ մոտ 1400 մարդ, որից 640-ից ավելի՝ սպանվածներ և մահացածներ, իսկ մոտ 700-ը՝ հունվարյան վիճակագրության ընթացքում ինչ-ինչ պատճառներով հաշվառումից դուրս մնացածներ: Ըստ այդմ, 1914թ. աշնանն առանձնացված 15 գյուղերում ապրել են շուրջ 13.8 հազար հայեր: Առաջնորդարանի տվյալներով այս գյուղերն ունեին 11 հազար հայ բնակիչ: Ինչպես տեսնում ենք, առկա է զգալի աճ՝ 2.8 հազար անձով կամ 25.5%-ով: Այս երևույթն, ի միջի այլոց, շատ հատուկ է 1908-1914թթ. ժամանակահատվածի Արևմտյան Հայաստանի համար: Հետևաբար, վերջին տոկոսա-

յին ցուցանիշը տարածելով ողջ կազայի վրա, կստանանք, որ Բասենում 1914թ. հայերի իրական թիվը եղել է շուրջ 21 հազար մարդ:

Գաղթականների երկրորդ խոշոր ալիքը դուրս եկավ Էրզրումի վիլայեթի Բայազետի սանջակից, որը տարածքով շուրջ 2 անգամ գերազանցում էր Բասենին: Որոշ տվյալներով, գաղթը սկսվեց 1914թ. դեկտեմբերի 18-19-ին (ըստ Ա-Դոյի՝ դեկտեմբերի 16-ին), և արդեն դեկտեմբերի 23-ին պետական սահմանը հատեցին փախստականների առաջին խմբերը: Մինչև բուն ելքը անցնելը, չմոռանանք նշել, որ սանջակը գրավում էր Էրզրումի վիլայեթի հարավ-արևելյան ընդարձակ հատվածը, վարչականորեն բաժանելով 5 կազայի՝ Բայազետի, Դիադինի, Կարաքիլիսայի, Ալաշկերտի և Անթաբի (Դուքաղի): Գաղթն ամբողջովին ընդգրկեց դրանցից առաջին չորսի տարածքը: Վերջին 5-րդը՝ Անթաբը, ամենահեռավորն էր (գտնվում էր սանջակի ծայր հարավ-արևմտյան մասում՝ սահմանակցելով Բիթլիսի վիլայեթին), և տեղի հայերի միայն փոքր մասը հասցրեց հեռանալ Արևելյան Հայաստան: Համաձայն 1914թ. վերջին անցկացված Բայազետի սանջակից դուրս եկած փախստականների հաշվառման, վերջիններիս թիվը կազմում էր 23760 մարդ (3245 տուն): Ընդ որում, ի տարբերություն բասենցի իրենց հայրենակիցների, տեղի հայերը կրել էին ավելի նշանակալից կորուստներ՝ մոտավորապես 2280 զոհված, անհետ կորած, մահացած, մեծ էր նաև սառանգված կանանց և աղջիկների թիվը:[19] Փաստորեն, մինչև գաղթը վերոհիշյալ 3245 տներն ունեցել են շուրջ 26040 բնակիչ: Սակայն կողմից արդեն հիշատակված 1912թ. օսմանյան վիճակագրությունը Բայազետի սանջակի ամբողջ հայ բնակչության թիվը ցույց է տալիս ընդամենը 13412 մարդ:[20] Այս թվերի արդեն իսկ պարզ համադրումը դույզն ինչ կասկած չի թողնում, որ պաշտոնական տվյալներն ուղղակի կեղծված են, ոչ լիարժեք, հետևաբար՝ որևէ վիճակագրական հաշվարկի համար ընդունելի չեն կարող համարվել:

Այս առումով իրականությանն ավելի մոտ են մեզ հասու հայկական աղբյուրները: Նախ, Կարնո առաջնորդարանի վիճակագրության համաձայն, սանջակի ամբողջ տարածքում հայերի թիվը եղել է 25211 մարդ (սխալ հաշվարկով՝ 26251 մարդ):[21] Բացի այդ, հայտնի է Մշո առաջնորդարանի նախկին քարտուղար Նազարեթ Մարտիրոսյանի՝ Բայազետի սանջակի հայերի մանրամասն վիճակագրությունը, որի համաձայն նրանց թիվը կազմում էր շուրջ 27.4 հազար մարդ (27393):[22] Ինչպես տեսնում ենք, հայկական աղբյուրները բերում են տեղի փախստականների 1914թ. վերջին կազմված վիճակագրությանը խիստ մոտ տվյալներ, ինչն արդեն իսկ խոսում է դրանց հավաստիության մասին: Սակայն դեռ չշտապենք հետևություններ անել և փորձենք նաև ինքներս ճշտել Բայազետի սանջակի հայերի թիվը նշված ժամանակամիջոցում: Ընդ որում, ետևելով արևմտահայ գաղթականների հաշվառման հեղինակներին, նպատակահարմար ենք գտել Ալաշկերտ, Կարաքիլիսա, Դիադին և Անթաբ (Դուքաղ) կազաները միավորել մեկ խմբում՝ առանձնացնելով Բայազետը: Առաջին 4 կազաներից տեղափոխված հայերի թիվը, ըստ արդեն հայտնի հաշվառման, կազմել է 20120 մարդ (2725 տուն), իսկ կրած կորուստը՝ 2115 մարդ:[23] Այսինքն գրանցված 2725 տունը մինչև գաղթն ուներ 22235 հայ բնակիչ: Սակայն փաստերը ցույց են տալիս, որ նշված տարածքից գաղթել էին ոչ բոլոր հայերը:

ա. Դիադինի Ջուջան գյուղի բնակչությունը մեծամասամբ (մեր հաշվարկներով՝ շուրջ 380 մարդ)[24] մնացել էր տեղում:[25]

բ. Հայտնի է, որ Ալաշկերտի արևմտյան, հայկական ամենահեռավոր Զետկան (Զեյդեկան) և Մոլլա-Սուլեյման գյուղերի բնակչության զգալի մասը, ուշ տեղեկանալով համընդհանուր գաղթի մասին, չհասցրեց հեռանալ և ենթարկվեց քրդերի հարձակումներին ու վայրագ կոտորածին: Միօրյա վիճակագրությամբ Երևանի նահանգում գրանցվել էր Զետկանից՝ 53 տուն (500 անձ+կորուստը՝ 114 մարդ=614 մարդ մինչև գաղթը), իսկ Մոլլա-Սուլեյմանից՝ 63 տուն (660 անձ+կորուստը՝ 105 մարդ=765 մարդ մինչև գաղթը):[26] Մակայն ձեռքի տակ եղած լրացուցիչ փաստերը ցույց են տալիս, որ նշված բնակավայրերը շատ ավելի բազմամարդ են եղել: Այսպես, ըստ Ալ. Շիրվանզադեի (որն անձամբ եղել է գյուղում) և Ա-Դոյի տվյալների, Զետկանը 1914թ. նոյեմբերին (մինչև գաղթը) ուներ շուրջ 90 տուն հայ բնակիչ:[27] Նկատի ունենալով այս գյուղի փախստականների տան մեծության միջին գործակիցը (տմմգ)՝ 11.6 *(հաշվի ենք առել նաև կորուստը, ըստ միօրյա վիճակագրության տվյալների - Գ.Բ.)*, գյուղում եղել է առնվազն 1000 հայ բնակիչ: Ինչ վերաբերում է Մոլլա-Սուլեյմանին, ապա ըստ Կարնո առաջնորդարանի այն ուներ 1252 հայ բնակիչ (161 տուն), իսկ ըստ Ն. Մարտիրոսյանի՝ 1700 հայ բնակիչ (178 տուն):[28] Միջին հաշվարկով, գյուղում, ըստ էության, մինչև գաղթը բնակվել է 1500 հայ: Այսպիսով՝ 1915թ. հունվարի 30-ին նշված գյուղերից գրանցվել էին մինչև գաղթը և կոտորածը Զետկանում ապրող հայ բնակիչների 50%-ը (կորստի հետ՝ 61%-ը) և Մոլլա-Սուլեյմանի՝ 44%-ը (կորստի հետ՝ 51%-ը): Ըստ այդմ, այս բնակավայրերից Արևելյան Հայաստան չէր անցել առնվազն 1340 մարդ, (որից շուրջ 220-ը՝ միօրյա վիճակագրության ընթացքում Երևանի նահանգում գրանցված 116 տների զոհերն են): Հետևաբար, հաշվառման և ոչ մի ցուցակում չեն գրանցվել շուրջ 1120 հայեր: Ի դեպ, Ալաշկերտի առանձին գյուղերի (Ամատ, Աշխալի, Խաստուր, Թոփրախ-կալե գյուղաքաղաք են) բնակչությունը ևս ենթարկվեց մասնակի կոտորածի[29], ուստի չի բացառվում, որ այստեղից էլ որոշակի թվով բնակիչներ չէին կարող որևէ կերպ հաշվառվել:

գ. Փախստականների 1914թ. ցուցակներում բոլորովին չեն հանդիպում Կարաքիլիսայի և Դիադինի 3 գյուղեր (Բոթիգեղ[30], Դիղամ, Նավրուզ), ուր, մեր հաշվարկներով (հիմնված վերը հիշատակված աղբյուրների վրա) ապրել են ավելի քան 150 հայեր (տե՛ս հավելվածները):

դ. Վերջապես, ինչպես արդեն ասվել է, 1914թ. դեկտեմբերին գաղթել չկարողացավ Անթաբի (Դութաղի) կազայի հայերի մեծագույն մասը: Մեգ հասու տվյալների համաձայն տեղի 2 տասնյակ հայաբնակ գյուղերից (տես հավելվածները) Արևելյան Հայաստան էին անցել միայն 7-ի բնակիչները, ընդ որում ամբողջությամբ (կամ՝ գրեթե ամբողջությամբ) գաղթել էին Ասմարի (2-3 տուն), Դութաղի (9 տուն) և Մոլլա-Հասանի (10-12 տուն) հայերը՝ ընդամենը 170 մարդ (*հաշվարկը մերն է - Գ.Բ.*): Մյուս 4-ից, որոնք են Դերեկը (Դերիկ), Խարախուն, Մըլանը և Քոշքը, ինչպես ցույց են տալիս լրացուցիչ փաստերը, բնակչությունը դուրս էր եկել մասամբ: Այս վերջին բնակավայրերը, կազայի այլ հայաբնակ գյուղերի շարքում, հանդիպում են Մանազկերտի առաջնորդական փոխանորդ Հովհաննես քահանա Տեր-Ավետիսյանի 1915թ. մայիսի 28-ին Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ 5-րդին հղած՝ Դութաղի, Բաղնոցի և հարևան մի քանի այլ շրջանների կոտո-

բաժներին վերաբերող տեղեկագրում:[31] Վերջինս որոշակի ցույց է տալիս, որ այստեղ մինչև 1915թ. ապրիլյան ջարդը դեռ մնացել էին 15 տուն հայեր:[32] Այս փաստը հնարավորություն է ընձեռում պարզել 1914թ. դեկտեմբերի վերջին նշված 4 գյուղերից հեռացած հայերի մոտավոր թիվը: Մեր հաշվարկներով, մինչև 1914թ. դեկտեմբերյան զաղթն այստեղ ապրել են շուրջ 50 տուն հայեր (մոտավորապես 350 անձ)[33], այսինքն զաղթել էր 35-ը: Ըստ այդմ. մոտավոր տվյալներով, Դերեկ, Խարախու, Մըլան և Քոշք գյուղերից 1914թ. վերջին Արևելյան Հայաստանում ապաստանել էին շուրջ 250 բնակիչներ:[34] Այսպիսով. Անթաբի (Դութաղի) կազայի քննարկվող 7 գյուղերից Արևելյան Հայաստանում գրանցված զաղթական հայերի թիվը կազմել է մոտավորապես 420-450 մարդ: Ընդ որում, մեր հաշվարկներով[35], ամբողջ գավառի հայ բնակչության թիվը տատանվում էր 2.5 հազարից-2.6-ի միջև, հետևաբար տեղում մնացել էր ավելի քան 2 հազար մարդ:

Ամփոփենք. Ալաշկերտի, Կարաքիլիսայի, Դիադինի և Անթաբի (Դութաղի) կազաներում ապրող հայերից 1914թ. վերջին չէին զաղթել (զոհվել կամ մնացել էին տեղում) շուրջ 3650-ը: Հաշվի առնելով քննարկվող 4 կազաներից Արևելյան Հայաստանում գրանցված փախստականների ընդհանուր թիվը՝ 20120 անձ, ինչպես նաև ունեցած կորուստը՝ 2115 անձ, կստանանք, որ այստեղ մինչև զաղթը բնակվում էր շուրջ 25.9 հազար հայ:

Ինչ վերաբերում է Բայազետին, ապա տեղի զաղթականների թիվը կազմում էր շուրջ 3.8 հազար (3798) մարդ կամ 520 տուն:[36] Նրանք դուրս էին եկել համանուն քաղաքից, ինչպես նաև շրջակա 3 հայաբնակ գյուղերից (Արծափ, Մայրամանա, Քորուն): Տարօրինակ կերպով, ցուցակում տեղ չի գտել հայաշատ Մոսուն (Մուսուն) գյուղը[37], որը տարբեր տվյալներով ուներ 570-770 բնակիչ: Բացի այդ, փաստեր կան, որ հայեր են ապրել նաև քաղաքի մոտակա Թավլա (Վերին Թավլեն) գյուղում (ըստ Ն. Մարտիրոսյանի՝ 65 բնակիչ)[38]: Այս բացը պարզում է 30.01.1915թ. միօրյա վիճակագրությունը, համաձայն որի Բայազետի կազայի հայերի մի մասն ընդհանրապես չէր զաղթել՝ մնալով հայրենիքում:[39] Փաստորեն՝ տեղի զաղթականների վերաբերյալ տվյալներն ամբողջական չեն: Այնպես որ, Բայազետի հայերի հավանական թիվը (հթ) որոշելիս ստիպված ենք դիմել Կարոն առաջնորդարանի և Ն. Մարտիրոսյանի տվյալների օգնությանը: Ըստ առաջինի՝ Բայազետում հայերի թիվը եղել է 4886 անձ, իսկ երկրորդով՝ 4582 անձ:[40] Ուստի առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին այստեղ հայերի թիվը պետք է կազմեր միջինը՝ 4.7 հազարից – 4.8 հազար մարդ: Այս հարցում ևս օսմանյան 1912թ. վիճակագրությունը տալիս է խիստ նվազեցված տվյալներ՝ 2619 մարդ:[41] Այսպիսով, մեր հաշվարկներով, 1914թ. Բայազետի սանջակի հայերի իրական թիվը եղել է շուրջ 30.7 հազար մարդ, այսինքն ավելի քան 17 հազարով (129 %-ով-sic!) գերազանցել «համընդհանուր մարդահամար» ամպագոռգոռ անունը կրող օսմանյան 1912թ. վիճակագրության տվյալները:

Ամփոփենք.

ա. 1914-1917թթ. արևմտահայ զաղթականների վիճակագրական նյութերն ուշագրավ և միևնույն ժամանակ վստահելի աղբյուրներ են առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին Արևմտյան Հայաստանում մի ամբողջ շարք գավառների հայ բնակչության իրական թվաքանակը ճշտելու համար:

բ. Քննությունը ցույց է տալիս, որ նույն ժամանակաշրջանի հայկական վիճակագրական աղբյուրներում, որպես կանոն, ճիշտ է արտացոլված հայ բնակչության թիվը, հետևաբար՝ հիմնականում հավաստի են: Դրանցում երբեմն հանդիպող լուրջ անճշտությունները հնարավորության դեպքում կարելի է ուղղել վերը նշված նյութերի օգնությամբ:

գ. Օսմանյան պաշտոնական վիճակագրությունը ոչ միայն անվստահելի է իր որոշակի քաղաքական միտումնավորության պատճառով, այլև կազմված է հակագիտական սկզբունքներով: Դա, մասնավորապես, ցայտուն կերպով ցույց է տալիս Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի ժողովրդագրական իրավիճակին և, հատկապես, հայ բնակչությանը վերաբերող տվյալների քննությունը:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

[1] *Խուսափելու համար ավելորդ սխալներից, այստեղ և հետագայում ամսաթվերը տվել ենք հին տոմարով (Գ.Բ.):*

[2] ՀՀ Պետական պատմական կենտրոնական արխիվ, ֆոնդ 28, ցուցակ 1, գործ N 128, թերթ 73-75 (այսուհետև՝ ՀՀ ՊՊԿԱ): Ա-Դո. Մեծ դէպքերը Վասպուրականում 1914-1915 թւականներին, Երևան, 1917, էջ 107:

[3] «Տեղեկագիր Հայկական կենտրոնական կոմիտէի գաղթական-փախստականների մասին», «Հորիզոն», Թիֆլիս, 1915, N 61, Հավելված, էջ 1:

[4] "Эриванская статистическая комиссия. Однодневная перепись беженцев из Турции, Персии и из мест, пограничных с Турцией (армян, айсоров, греков и пр.) 1914-1915гг.", Эривань, 1915: ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, g. 1, գ. N 132, թթ. 30-35: ՀՀ պատմության պետական թանգարան, նոր պատմության ֆոնդ, Ա-Դոյի արխիվ, գ. N 839/176, թթ. 1-5:

[5] Kemal H. Karpat. Ottoman Population. 1830-1914. Demographic and Social Characteristics, Madison, Wisconsin, 1985. J. McCarthy, Muslims and Minorities. The Population of Ottoman Anatolia and the End of the Empire, New York-London, 1983.

[6] Տե՛ս «Հորիզոն», N 276:

[7] *Անվանապես հիշված են 24-ը: Հանդիպում են նաև «այլ գյուղերից» դուրս եկած 111 բնակիչներ (17 տուն)*: Տե՛ս Однодневная перепись..., стр. 44/45:

[8] Ն. տ.:

[9] Ն. տ.:

[10] Շարաֆյան Աղ. Թիւրքահայ փախստականները և նրանց վիճակը, «Հորիզոն», N 273, էջ 2: «Բասէն գաւառի 11 հայ գիւղերի ազգաբնակութիւնը», «Հորիզոն», N 276, էջ 3: ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, g. 1, գ. 128, թ. 74:

[11] *Ըստ միօրյա վիճակագրության տվյալների՝ կորստի հաշվարկով, բասենցի հայերի տան մեծության միջին գործակիցը (տնմզ) կազմում էր 8.8 (հաշվարկը մերն է - Գ. Բ.):*

[12] ՀՀ ՊՊԿԱ, ն. տ., թ. 11:

[13] Однодневная перепись..., ն. տ.:

[14] Հաշվարկել ենք ըստ Kevorkian R. H., Paboudjian P. B. Les Armenians dans l'empire Ottoman a la veille du genocide, Paris, 1992, pp. 449-451:

[15] Մանրամասն տե՛ս Karpat, pp. 170/171:

[16] Бекгульянц Р. (Северянин). По Турецкой Армении, Ростов-на-Дону, 1914, стр. 68.

[17] Ա-Դո, էջ 179-180: Les Armeniens..., ն. տ.:

[18] *Այդ գյուղերն են՝ Ալիճաքրակ, Գոմաճոր, Դելիբաբա, Էգեպատ, Թոդրվերան, Խղըր-Էլիաս, Խոսրովերան, Կողաբազ, Հաբսնեբար, Ճռասոն, Յաղան, Յուզվերան, Տոտի, Քյոփրիքյոյ*: Տես նաև ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, g. 1, գ. 128,թ. 74:

[19] Տեղեկագիր հայկական կենտրոնական կոմիտէի..., էջ 1-2:

[20] Karpat, pp. 170/171.

[21] Les Arméniens..., pp. 59, 458-460. *Ի դեպ, գյուղում ունեցող մեկ այլ ցուցակի համաձայն, Բայազետի սանջակի հայերի թիվը կազմում էր 16466 մարդ* (տես՝ Бектульянц, стр. 68): *Սակայն վերջինս լիարժեք չի կարող համարվել, արդեն իսկ հասկանալի պատճառներով, և, ամենայն հավանականությամբ, նախնական վիճակագրության սարքերակ է եղել: Ընդ որում, կարծում ենք, որ հաշվառումից դուրս են թողնված կաթոլիկ հայերը, որոնք մեծ թիվ էին կազմում մանավանդ Աշտարակում: Արևմտամեջայինիվ,ունգամ սա 3054 մարդով (22.8%-ով) գերազանցում է ստանձնած տվյալները* - Գ. Բ.:

[22] «Վան-Տուպ», Թ., 1917, N 6, էջ 4-5:

[23] Տեղեկագիր հայկական կենտրոնական կոմիտեի..., ն. տ.:

[24] *Ն. Մարտիրոսյանը գյուղի հայերի թիվը նշում է 448, իսկ Կարնո առաջնորդարանի վիճակագրության մեջ՝ այն 387 է: Վերցրել ենք միջին հաշվարկը՝ մոտ 420 մարդ. և, հաշվի առնելով, որ գյուղից, 30.01.1915թ. միօրյա վիճակագրությամբ, Երևանի նահանգում գրանցվել են ընդամենը 41 հայեր (6 տուն, զոհերի թիվը 2 անձ), ստացել վերոհիշյալ թիվը* -Գ.Բ.:

[25] Одновневная перепись..., стр. 48

[26] Ն. տ.:

[27] Շիրվանզադե Ալ. Պատերազմի վայրում, Երկերի ժողովածու, հտ. 9, Եր., 1961, էջ 166: *Ի դեպ, հեղինակը նշում է, որ Զեյթունի «յուրաքանչյուր ընտանիք» ուներ «20-ից մինչև 30 հոգի»:* Ա-Դո. Մեծ դէպքերը.., էջ 119:

[28] Ըստ Ա-Դոյի՝ 154 տուն հայ (ն. տ.):

[29] Одновневная перепись..., стр 46/47.

[30] *Բոթիկեղը հանդիպում է 1915թ. հունվարի 30-ի միօրյա վիճակագրության ցուցակներում: Գրանցվել էր տեղի 22 բն.* (3 տուն: Ն. տ.):

[31] ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 54, pp. 18-19: Հմմտ. "Геноцид армян в Османской империи", сборник документов и материалов, под. ред. Нерсесяна М. Г., Ереван, 1983, стр. 284: «Հորիզոն», 1915, N 153, էջ 1:

[32] ՀՀ ՊՊԿԱ, ն. տ.:

[33] *Օգտվել ենք Կարնո առաջնորդարանի արդեն հայտնի, ինչպես նաև՝ Ն. Մարտիրոսյանի Անթարի հայ բնակչության, վիճակագրություններից* (տես Les Arméniens..., p. 460: «Վան-Տուպ», 1916, N 15, էջ 9): *Առանձին դեպքերում օգտագործել ենք նաև Ա-Դոյի տվյալները* (տես Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթների, էջ 216-217):

[34] *Նկատի ենք ունեցել Անթարի հայերի տմմգ-ն՝ 7.1 (Դուքաղ գյուղի տվյալներով՝ ըստ միօրյա վիճակագրության):*

[35] *Ըստ բավմիցս արդեն հիշատակված հայկական վիճակագրությունների, գավառի հայ բնակչության թիվն էր 1563 (սխալ հաշվարկով՝ 1624, Կարնո առաջնորդարան* Les Arméniens..., ն. տ.) *և 1938* (Ն. Մարտիրոսյան, ն. տ.): *Հաշվարկել ենք նաև Գրաքոմ գյուղի բնակչությունը, որը թեև ավելի հաճախ հանդիպում է հարևան Վանի վիլայեթի Արճեշի կազայում, բայց վարչականորեն 1912-1914թթ. Անթարի կազմում էր:* Տես "Копия турецкой карты Азиатской Турции, изданной в масштабе 1:200000 в 1330 году гиджры, т. е. в 1911-1912 годах", [Тифлис], 1915-1917, м. 1:210000, IV-16: "Мелазгерд" պլանշետը: *Ընդ որում, հարկ ենք համարում նկատել, որ միայն Դուքաղ գյուղի հայ փախստականների թիվը միօրյա վիճակագրության տվյալներով արդեն իսկ 1/3-ով գերազանցում է թե՛ Կարնո առաջնորդարանի, և թե՛ Ն. Մարտիրոսյանի թվերը* (տես հավելվածների բաժին): *Եվս մի դիտողություն. առաջնորդարանի ցուցակում նշվող անների ամփոփիչ քանակը նույնն է Ա-Դոյի տվյալների հետ (2 դեպքում էլ՝ 203)* - Գ. Բ.:

[36] Տեղեկագիր հայկական կենտրոնական կոմիտեի, ն. տ.:

[37] *Ի դեպ, գյուղը հանդիպում է 30.01.1915թ. միօրյա վիճակագրության ցուցակներում* - Գ. Բ.:

[38] «Վան-Տուպ», 1917, N 6, էջ 4:

[39] Одновневная перепись..., стр. 46/47:

[40] Les Armeniens..., p. 458: «Վան-Տոսպ», ն. տ.:
[41] Karpat, ibid.

ՀԱՎԵԼՎԱԾ Ա.

Էրզրումի վիլայեթի Բասենի կազայի 15 գյուղերի հայ բնակչության հավանական թիվը (հթ) 1914 թվականին՝ ճշտված ըստ Երևանի նահանգի տարածքում ապաստանած գաղթականների 1915թ. հունվարի 30-ի միօրյա վիճակագրության տվյալների (համեմատությամբ Կարոնո առաջնորդարանի 1909թ. տեղեկությունների)

NN	ԲՆԱԿԱՎԱՅՐ	1909		30.01.1915				ՀԹ (ընդ)
		տուն	բն.	տուն	բն.	կորուստը	մինչև գյուղը	
1	Ալիճագրակ (Ալուճագրակ)	111	1075	172	1434	39	1473	1470
2	Գոմաձոր	160	1538	185	1525	62	1587	1600
3	Դեյիրաբա (Վեյիրարա)	134	1206	122	1095	54	1149	1150
4	Էգեսյատ	103	978	128	1149	61	1210	1210
5	Թոռոմերան	54	498	61	489	46	535	535
6	Իշխու [1]	110	1037	120	917	46	963	1160
7	Խոռոռ-Էլիաս	3	29	4	35	2	37	40
8	Խոսրոմերան	27	243	25	200	17	217	260
9	Կուղարազ	35	312	60	480	27	507	510
10	Հարսներար	47	390	48	446	26	472	470
11	Ճռասոն (Ջրասուն)	48	456	95	815	41	856	860
12	Յառան (Եյան)	142	1298	174	1308	78	1386	1570
13	Յուզվերան	64	608	89	777	69	846	1140
14	Տուտի [2]	57	540	71	680	20	700	700
15	Քյոփրիքյոյ (Վաղաղաղավան)	90	810	122	1076	55	1131	1130
		1185	11018	1476	12426	643	13069	13800

[1] *NN 6, 8, 12-13 գյուղերի հայ բնակչության հթ որոշելիս, հաշվարկի մեջ ենք մտցրել նաև 30. 01. 1915թ. միօրյա վիճակագրության ցուցակներում նշված բնակավայրերի տեղ չգտած շուրջ 80 տները՝ նկատի ունենալով Բասենի հայերի տան մեծության միջին գործակիցը (տմմգ)՝ 8.8:*
[2] *Les Armeniens-ի հեղինակները սխալմամբ նույնացրել են կազայի Թայխոջա (Տարխոջա) գյուղի հետ: Ճշտել ենք ըստ Ա-Դոյի «Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները» գրքի՝ տների թվով:*

ՀԱՎԵԼՎԱԾ Բ.

Էրզրումի վիլայեթի Բայազետի սանջակի կազաների հայ բնակչության հավանական թիվը (հթ) 1914 թվականին

Ստորև ներկայացվող աղյուսակները կազմելիս, հիմք ենք ընդունել Կարոնո առաջնորդարանի (ԿԱ)[1] և Ն. Մարտիրոսյանի (ՆՄ)[2] արդեն հայտնի վիճակագրությունները՝ որպես հթ վերցնելով միջին հաշվարկային ցուցանիշը: Հարկ է նշել, որ ինչպես ցույց է տալիս 1914թ. դեկտեմբերյան հաշվառման և 1915 թվականի հունվարի 30-ի միօրյա վիճակագրության տվյալների համեմատումը, ի տարբերություն Բասենի, Բայազետի սանջակից դուրս եկած փախստականների մի զգալի մասն արդեն հեռացել էր այլևայլ վայրեր, այդ թվում՝ ռուսների կողմից վերագրավ-

ված Բայազետ և շրջակա որոշ շրջաններ.[3] Մեր հաշվարկներով, այդ թիվը կազմում էր 7148 մարդ, այսինքն 1914թ. դեկտեմբերին գրանցված գաղթականների (23760 մարդ) 30%-ը դուրս էր եկել Երևանի նահանգից: Սրա նով հանդերձ միօրյա վիճակագրությունն ուշագրավ տվյալներ է հաղորդում սանջակի մի ամբողջ շարք բնակավայրերի վերաբերյալ: Մեր կողմից առանձնացված են նման 15 գյուղեր, որոնց տվյալներն օգնում են կատարելու ավելի ճշգրիտ միջին հաշվարկ: Ընդսմին, երեքի մասին եղած վիճակագրական տեղեկությունները (Դուքաղ, Ջաջուռ-Իրիցուգեղ, Վերին Քուփղրան) նույնությամբ ընդգրկել ենք համապատասխան աղյուսակներում, քանի որ դրանք գերազանցում են թե՛ Կարնո առաջնորդարանի և թե՛ Ն. Մարտիրոսյանի տվյալները: Բացի այդ, որևէ բնակավայրի վերաբերյալ մեր ընտրած սկզբնաղբյուրներից միայն մեկում վիճակագրական տվյալների առկայության դեպքում դրանք վերցրել ենք նույնությամբ: Հաշվի են առնված նաև տվյալ ժամանակահատվածին առնչվող այլ սկզբնաղբյուրներ (նշված են ծանոթագրությունների): Կազաները տալիս ենք ըստ 1911-1912թթ. վարչական սահմանների [օգտագործել ենք "Копия турецкой карты Азиатской Турции" քարտեզի (մասշտաբ՝ 1:210000) III-16: "Кара-килиса", III-17: "Баязет" և IV-16: "Мелазгерд" պլանշեաները]:

[1] Տե՛ս Les Arméniens... pp. 458-460:
[2] Տե՛ս «Վան-Տոսպ», 1916, N 14, էջ 9, 1917, N 6, էջ 4-5:
[3] Однодневная перепись.., стр. 46/47.

1. ԲԱՅԱԶԵՏԻ ԿԱԶԱՅԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԹ 1914 ԹՎԱԿԱՆԻՆ

NN	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԿԱ		ՆՄ		ՀԹ (բն.)
		տուն	բն.	տուն	բն.	
1	Արծափ	120	1200	130	1360	1280-1300
2	Բայազետ քաղաք		2500	250	2180	2300-2350
3	Թավլա (-են. Վերին)			8	65	65
4	Մայրամանա	7	37	15	97	80[1]
5	Մուսուն (Մա-)	70	774	60	570	670
6	Ջորուն	30	375	35	310	340
		227[2]	4886	498	4582	4735-4805

[1] *Հթ՝ ըստ Ն. Մարտիրոսյանի տվյալների և գյուղի 1915թ. դեկտեմբերի 15-ին Երևանի նահանգը Նոր-Բայազետի գավառի տարածքում կատարված վիճակագրության (գրանցվել էր 64 բնակիչ):* Տե՛ս ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 28, ց. 1, գ. 408, թ. 1:
[2] *Առանց Բայազետի:*

2. ԴԻԱԴԻՆԻ ԿԱԶԱՅԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԹ 1914 ԹՎԱԿԱՆԻՆ

NN	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԿԱ		ՆՄ		ՀԹ (բն.)
		տուն	բն.	տուն	բն.	
1	Բոթիկեղ (Ներքին)			7	45	45
2	Դաշլիչայ (Քարավջուր, Ներքին)	15	140	7	50	100
3	Դիադին (Տատոնոն), ավան	17	150	15	114	130
4	Թավլա (-են)	5	35			35
5	Ղարաբազար (Խ-, Ղարղա-)	35	300	30	257	280
6	Ղումլուբուլախ (-պուճախ)	37	322	45	400	360
7	Միրզաբան (-քենդ)	6	45	12	78	70[1]
8	Նավրուզիգեղ			10	76	80
9	Ջուլան (ց)	39	387	50	448	420

NN	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԿԱ		ՆՄ		ՀԹ (ընդ.)
		տուն	բն.	տուն	բն.	
10	Սեյդռ (Սեվդռ)	7	70	6	50	60
11	Վանքիգեղ (Ս. Հովհաննես, Ուլքիլիսա, Բազավան)		319	30	280	300
		161[2]	1768	212	1798	1880

[1] *Միջին հաշվարկը՝ ըստ Ն. Մարտիրոսյանի և միջոյա վիճակագրության տվյալների:*
[2] *Առանց Վանքիգեղի:*

3. ԿԱՐԱՔԻԼԻՍԱՅԻ ԿԱԶԱՅԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԹ 1914 ԹՎԱԿԱՆԻՆ

NN	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԿԱ		ՆՄ		ՀԹ (ընդ.)
		տուն	բն.	տուն	բն.	
1	Աղաղավա[1]	տվյալներ չկան				20
2	Աշխալի (-կալա)	21	196	25	185	190-200
3	Բազրխանա (Բեղիրխանա գեղ)	տվյալներ չկան				20
4	Դանազիրան	տվյալներ չկան				20
5	Դիդամ			4	30	30
6	Երանոս	18	135	15	112	120
7	Զիրո (Զիրավ)	15	249	25	197	225
8	Խաչլու	տվյալներ չկան				20
9	Խղղը (Հազը)	11	116	8	52	80-85
10	Կարաքիլիսա (Ղ-), գ-քաղաք	320	2250	400	3100	2800[2]
11	Հաջի-Սաֆար			3	20	20
12	Ղազարիգեղ	տվյալներ չկան				20
13	Ղազուգեղ (Ղազի)	29	520	50	422	490-500
14	Ղարասու (Խ-, Խարս՞)			17	127	130
15	Մանկասար	91	923	80	786	865
16	Յոնջալու (Առավյուտոց գյուղ)	120	1320	85	865	1100-1115
17	Նորգեղ (Մազրա)	44	574	45	384	505-510
18	Չամըրլու	6	53	3	22	40
19	Ջաջուռ-Իրիցուգեղ	73	712	65	490	790[3]
20	Քուփղրան (Վերին)			5	36	50-55
		748	7048	840	6828	7540-7580

[1] *NN 1, 3-4, 8 և 12 գյուղերը ըստ 1914թ. դեկտեմբերի վերջին Արևելյան Հայաստանում ապաստանած փախստականների ցուցակների* (տե՛ս Տեղեկագիր հայկական կենտրոնական կոմիտեի..., էջ 1-2): *Նշված բնակավայրերում հաշվել ենք մոտ 100 անձ:*
[2] *NN 10,13, 15-17 բնակավայրերի հթ-ն որոշելիս նկատի ենք առել աղյուսակի առավելագույն ցուցանիշը և 1915թ. 01.30-ի վիճակագրության տվյալները (կորստի հաշվարկով): Ըստ այդմ, Կարաքիլիսայից գրանցված 342 տունն ուներ 2392 բնակիչ + կորուստը՝ 96 բն. = 2478 բն. մինչև գաղթը, Ղազուգեղից՝ 51 տ. 432 բն. + կոր.՝ 23 բն. = 455 բն. մ. գ., Մանկասարից՝ 80տ. 779բն. + կոր.՝ 28 բն. =807 բն. մ. գ., Յոնջալուից՝ 109 տ. 870 բն. + կոր.՝ 39 բն. =909 բն. մ. գ., Նորգեղից՝ 62 տ. 404 բն. + կոր.՝*

32 բն. = 436 բն. մ. գ.: Տվյալները՝ ըստ Однодневная перепись... стр. 48/49:

[2] *NN 19-20 գյուղերի հայերի հթ համար նույնությամբ ընդունել ենք 30. 01. 1915թ. միջոցյա վիճակագրության տվյալները, որոնց համաձայն Ջաջուռ-Իրիցուզեղից 92 տուն ուներ 767 բն. + կոր.՝ 23 բն. = 790 բն. մ. գ., իսկ Քուսիլրանի 4 տունը՝ 51 բն. + կոր.՝ 2 բն. = 53 բն. մ. գ. (և. ա.):*

4. ԱԼԱՇԿԵՐՏԻ ԿԱԶԱՅԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԹ 1914 ԹՎԱԿԱՆԻՆ

NN	ԲՆԱԿԱՎԱՅՐ	ԿԱ		ՆՄ		ՀԹ (բն.)
		տուն	բն.	տուն	բն.	
1	Ամատ (Համատ)	204	1581	247	2099	1840
2	Գարրասան	8	65			65
3	Եխենիթափա (-թեփեն, Բյուր)	115	740	205	1790	1425[1]
4	Ջեթկան (Ջեթ-, Ջեյդեկան, Ջիբկա)	63	515	78	664	1000[2]
5	Թուրխան-կալե (Ալաշկերտ, Վաղարշաբերտ), գ-քաղաք	160	1400	145	1088	1245-1250
6	Խաչու (Խաչյոլ)	104	824	134	1142	1000
7	Խաստուլ (Խնձոր)	146	1322	214	1819	1630
8	Խոչաց	40	354	32	240	320
9	Ղաղաբեկ (Խ-)		475	64	488	480
10	Մոլլա-Սուլեյման	161	1252	178	1700	1500
11	Շամիան	տվյալներ չկան				20[3]
12	Չալկանի (-կանի)	84	650	94	799	725
13	Ֆրանկ-Իրիցուզեղ	76	768	98	748	760
		1161[4]	9946	1489	12577	12010-12015

[1] *NN 3, 7-8 գյուղերի հթ որոշելիս ելակետային ենք ընդունել աղյուսակում հանդիպող առավելագույն ցուցանիշը և 30.01.1915 միջոցյա վիճակագրության տվյալները: Ըստ այդմ, Երևանի նահանգում գրանցվել էին Եխենիթափայից132տ. 1002 բն. + կոր.՝ 54 բն. = 1056 բն. մ. գ., Խաստուրից 168 տ. 1392 բն. + կոր.՝ 63 բն. = 1455բն.մ. գ., Խոչյանից՝ 39 տ. 257 բն. + կոր.՝ 20 բն. = 277 բն. մ. գ.* (տե՛ս Однодневная перепись.., стр. 46/47):

[2] *Մեր հաշվարկով: Տե՛ս նաև տեքստը (Դ. Բ.):*

[3] *Տե՛ս Կարաքիլիսայի գյուղացանկի N 1 ծանոթագրությունը:*

[4] *Առանց Ղայաբեկի:*

5. ԱՆԹԱԲԻ (ԴՈՒԹԱՂԻ) ԿԱԶԱՅԻ ՀԱՅ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԹ 1914 ԹՎԱԿԱՆԻՆ

NN	ԲՆԱԿԱՎԱՅՐ	1909 (տուն)[1]	ԿԱ (բն.)	ՆՄ		ՀԹ (բն)
				տուն	բն.	
1	Ամար (Համեր)	3	24	2	13	20
2	Բաղնոց (Պաղնոց)	50	400	150	984	1000-1050[2]
3	Բոդո (-ան, Պոտ-)	11	88	10	65	75
4	Գրազոմ (Կ-)	տվյալներ չկան		33	280	465[3]
5	Դերեկ (-իկ)	2	16	8	58	60
6	Դուբաղ	6	48	7	48	60-65[4]
7	Ջիարեթ (-ար)	տվյալներ չկան				15[3]
8	Խանիկ (-ըկ)	1		1	5	5
9	Խարախու (Ղարաղու)	15	120	12	65	100
10	Խարդալը (Ղարդալը)	5	40	4	30	35

NN	ԲՆԱԿԱՎԱՅՐ	1909 (տուն)	ԿԱ (բն.)	ՆՄ		ՀԹ (բն)
				տուն	բն.	
11	Խըրբասոր	19	152	13	76	110
12	Կոլա	տվյալներ չկան		1	6	5-10
13	Մըլան (Մլլոս)	12	96	11	82	85
14	Մոլլա-Հասան (Մալա-)	8		15	84	80-85
15	Մուսիկ	5	40	2	17	30
16	Նաղարշեյխ (-շեխ)	24	200	տվյալներ չկան		200
17	Շամե (Շամսի)	10	80	5	35	60
18	Ջամալվերդի (Ջաբալ-)	5	40	5	34	35-40
19	Քոշք	13	107	2	17	100[6]
20	Օզոյի (Հասուն)	տվյալներ չկան		6	39	40
		189	1451	287	1938	2580-2655

[1] *Ա-Դոյի տվյալները:*

[2] *Ըստ Հովհ. Տեր-Ավետիսյանի 28.05.1915թ. տեղեկագրի՝ 150 տուն հայ բնակիչ (ՀՀ ՊՊԿԱ, ֆ. 57, ց. 5, գ. 54, թ. 18): Հթ որոշել ենք ըստ տների թվի և Անթաբի (Դուրարի) հայերի տմմգ-ի՝ 7.1 (տես տեքստի N 34 ծանոթագրությունը):*

[3] *Ա-Դոյի մոտ՝ Վանի վիլայեթի Արճեշի կազայի կազմում՝ 411 հայ բնակչով (50 տուն):* Տե՛ս Մեծ դէպքերը, էջ 16: *Սակայն նույն հեղինակի արխիվում պահպանվել է Արճեշի հայ բնակչության մեկ այլ վիճակագրություն, որտեղից էլ վերցրել ենք վերոհիշյալ թիվը* (տե՛ս ՀՊՊԹ, նոր պատմության ֆոնդ, Ա-Դոյի արխիվ, N 839/143-11, p. 6):

[4] *Հթ՝ ըստ 30.01.1915թ. միօրյա վիճակագրության (էջ. 46/47):*

[5] *Ըստ Հովհ. քահանա Տեր-Ավետիսյանի տեղեկագրի, որով գյուղում ապրում էին 2 տուն հայեր (x տմմգ՝ 7.1 - Գ. Բ.):*

[6] *Այն փաստը, որ գյուղից գաղթականներ էին գրանցվել 1914թ. դեկտեմբերին, բայց 1915թ. գարնանն այստեղ դեռ մնացել էին 2 տուն հայեր (ըստ Տեր-Ավետիսյանի նույն տեղեկագրի), պարզում է, որ Քոշքում նրանց թիվն ավելին էր, քան ցույց է տալիս Ն. Մարտիրոսյանը: Հթ-ն ճշտել ենք՝ ելակետային համարելով Ա-Դոյի տվյալները: Իրոք, գյուղում ըստ Ս. Հայկունու 1890-ական թթ. հայերի թիվը 20 տուն էր* (տե՛ս Հայկունի Ս., Բագրեւանդ ջրաբաշխ գաւառ, մասն Ա, Ս. Էջմիածին, 1894, էջ 296):

ԾՆԹ. Ա-Դոյի տվյալներով, 1909թ. գավառի տարածքում փոքրաթիվ հայեր են բնակվել նաև Ավջո (Աջուջ, 2 տուն), Արաբալի (Ներքին, 2 տուն), Բարդավ (Փարթավ կամ Դըրբավ, 2 տուն), Խարդալը (Վերին, 5 տուն), Մաթար (2 տուն), Մլլա-Շամին (1 տուն) գյուղերում: Հետագա սկզբնաղբյուրներն ամենայն հավանականությամբ այս բնակավայրերի մասին լռում են այն պատճառով, որ տեղի հայերն աստիճանաբար հեռացել են՝ հաստատվելով այլ գյուղերում (թերևս սրանով պետք է բացատրել Բաղնոցի հայերի մեծ աճը 1914թ. - Գ. Բ.): Մինչև 1895-1896թթ. կոտորածները հայեր են բնակվել նաև Բաղնոցից հարավ ընկած Խզըլխայա (Կզըլկայա կամ Կարմիրքար) գյուղում՝ 20-30 տուն (տե՛ս Колюбакин А. М., Материалы для военно-статистического обозрения Азиатской Турции, т. 2, ч. 2, Т., 1890, стр 392/393: Հայկունի, նշ. տ.: Հմմտ.՝ «Արծագանք», Թ., 1882, N 38, էջ 594): *Ըստ երևույթին, չտանելով 1890-ական թթ. բռնություններն ու հալածանքները, տեղի հայերը նույնպես հեռացել էին ավելի ապահով վայրեր, որի հետևանքով 20-րդ դարի սկզբին գյուղը լիովին հայաթափվել էր, և այլևս սկզբնաղբյուրներում չի հանդիպում:*

Резюме

Численность армянского населения некоторых каза Эрзрумского вилайета (1914-1915гг.).

Гегам Бадалян

Основываясь на данных переписей армянских беженцев, которые неоднократно проводились на территории закавказских провинций Российской империи, уточняется число армянского населения Басенской казы и Баязетского санджака (состоящий из 5-и каз) Эрзерумского вилайета. С помощью этих данных, а также статистических сведений ряда армянских источников (статистические таблицы Эрзерумской армянской епархии, частных лиц и т. д.) выясняется, что накануне Первой мировой войны в Басенской казе проживало около 21 тыс. армян, тогда как по турецкой официальной переписи 1912 г. (1330 г. Гиджры) все армянское население показано немногим более 10 тыс. То же самое можно сказать и в связи с Баязетским санджаком, где насчитывалось 30,7 тыс. армян (официально – всего 13,4 тыс.). Надо отметить, что в конце 1914 г. в Закавказье было зарегестрировано 23,7 тыс. армян – выходцев из этого санджака (без учета понесенных потерь). Тем самым подтверждается высокая достоверность армянской и политическая предвзятость официальной турецкой статистики.

Summary

Quantities of the Armenian Population in Some of the Kazas of the Province of Erzerum (1914-1915).

Gegham Badalyan

Based on census statistics of Armenian Refugees, which repeatedly were collected during 1914-15 on the territory of the Transcaucasian provinces of the Russian Empire, the author provides a more precisel a number of the Armenian population of the kaza (district) of Basen and sancak of Bayazet (which consisted of 5 kazas) of the Erzerum Vilayet (province). With the help of these facts and the statistical data of a number of the Armenian sources (the statistical lists of the Armenian Eparchy of Erzerum, also the lists drawn up by the private persons etc.), it became clear that before the World War I there had lived about 21000 Armenians in the kaza of Basen, while according to the Turkish official census of 1912 (1330 Hicre) the whole Armenian population of the kaza was shown somewhat more than 10000 (!). We can say the same about the Bayazet sancak also, where there lived 30700 Armenians (officially – only 13400). We must note, that at the end of 1914 in the Transcaucasus there were registered more than 23700 Armenians from this sancak (without taking into account all the casualties). Therefore, the Armenian statistics are nearest the truth and most reliable, compared to the official Turkish.